երկաթի, պղնձի, կապարի և այլն, բայց այլ՝ ամենայն ոք կարէ հանել հատուցանելով սոացեալ հրահանգին տասանորդն ծախն հանողէն ելցէ։

## ԳԼՈՒԽ ՆՃ.

Ամենայն ոք ոսկի և երծաթն իւր արձակալէս մուծանել կարէ 'ի տունն ապելոյ դրամոց զի ապեսցի, հատուցանելով հազարին երկու և կէս ծախ նորայ։

## ԳԼՈՒԽ ՆՃԱ.

Ամենայն տուն և բնակութիւն արժանաւորութեան իւրոյ գնոյն համարեսցի նմա տարեկան եկամուտ, և զոր ինչ եկամուտ տարեկանի 'ի նմանէ հատուցանել պարտ է ամենայն մի հարիւրի տարէն մին։

## ԳԼՈՒԽ ՆՃԲ.

Ամենայն ծանրութիւն կշռոց, չափս չափելոյ և չափարան պարտ է կնքել 'ի կնքաւ իշխանութենէ 'ի ամենայն տարւոջ համահաւասար գտեալ ըստ օրինաց, բառնալով յաւելորդութիւն և պակասութիւնքն նոցին, և ծախ կնքելոյն հանիլ տասն դրամ պղնձոյ։

## ԳԼՈՒԽ ՆՃԳ.

Ամենայն ոսկի, երծաթ, պղինձ, կապար ով